

ՄԵՂԹԻ, ԱՊԱՇԱՎՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄԻ ԴԻՄՆԱԶՈՒՅԵՐԻ ՇՈՒՂ

Է. Ա. ԳՐԻՆ

Վագրը կարիք չունի արդարացնելու
իր ազրեսիան, մինչդեռ մարդն ունի:

Ֆրանց Ալեքսանդեր

Յուրաքանչյուր հանցագործություն իրականացվում է ինչ-որ պահանջմունքների բավարարման նպատակով և, որպես կանոն, կատարվում է ի վնաս ուրիշի: Որպեսզի հանցանք կատարած անձը վերանայի իր վերաբերմունքը և ընտրի կյանքի ճիշտ ճանապարհ, անհրաժեշտ է, որ նա զղջման պահեր ապրի, այսինքն՝ գիտակցի, որ անարդար, վատ ու սխալ արարք է կատարել և անկեղծ ախտասանք զգա դրա համար:

Ձղջումը երկակի իմաստ է պարունակում.

1. յուրահատուկ ապրում, որն ուղեկցվում է տաղտկությամբ,
2. գիտակցումն այն բանի, որ կատարվածը սխալ է, անհարկի:

Ձղջումը նաև իր աստիճաններն ունի՝

- առաջին աստիճանում առկա են անբավարարվածության ապրումներ, բայց դրանք պատճառը չի գիտակցվում, քանի որ, լինելով վնաս պատճառող գործոններ, դրանք արտամղվում են դեպի անգիտակցական ոլորտ.

- երկրորդ աստիճանում թեև կրկին առկա են անբավարարվածության ապրումները, բայց այս դեպքում պատճառն արդեն գիտակցվում է՝ հանդիսանալով զղջման հիմք (երկու քայլն էլ նախորդում են որոշման կատարմանը),

- երրորդ աստիճանում որոշում ընդունելու պահին առաջանում են անբավարարվածության ապրումներ: Ընդ որում, դրանք կարող են լինել ոչ միայն բացասական, որ ուղեկցվում են զղջմամբ, այլև դրական, որ ուղեկցվում են գոհունակությամբ:

Երրորդ աստիճանում աշխուժանում է «ներքին ձայնը»՝ ինտուիցիան՝ որպես առավել նուրբ մեխանիզմ: Դրա շնորհիվ էլ մարդը զգուշանում է սխալներ գործելուց, այսինքն՝ հրատապ պահանջմունքներից մեկը կատարելու դեպքում խոչընդոտվում է հետագա մյուս պահանջմունքների բավարարումը:

Ձղջումը, անցնելով առաջին, ոչգիտակցված, պարզունակ աստիճանով, այնուհետև ուղղվում է դեպի հաջորդ փուլերը՝ անձի մեջ ձևավորելով ներքին ձայնին ունկնդրելու և այն հաշվի առնելու սովորություն, այսինքն՝ հետագա արարքը վայրկեանբար արժանանում է չգիտակցված գնահատականի: Դա իրականացվում է ռեֆլեքսիայի շնորհիվ, փոքր և մեծ կատարսիսների ճանապարհով, քանի որ զղջումն, ի վերջո, նույնպես յուրահատուկ կատարսիս է և օգնում է հոգեբանական ճնշումներից ազատագրվելուն:

Ռեֆլեքսիան (վարանամտությունը, սեփական ապրումները վերլուծելու հակումը)՝ կապի մեջ է ինչպես զղջման, այնպես էլ կատարսիսի հետ, քանի որ օգնում է գիտակցելու ցանկացած անբավարարվածության զգացման պատճառները: Սակայն ռեֆլեքսիայի ժամանակ այդ պատճառները ըմբռնվում են ոչ թե որպես արտաքին հանգամանքներ կամ անձին բնորոշ հատկություններ, այլ տվյալ

¹ Տե՛ս Ա. Ս. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, Եր., 1968:

իրավիճակում թույլ տրված սխալներ: Նման մոտեցումը, հասկանալի է, սեփական անձի մեջ չի առաջացնի խիստ հակասություն, երբ մեղքը բարդվում է իրավիճակի և շրջապատող մարդկանց կամ էլ սեփական բացասական հատկությունների վրա: Ինֆլեքսիան կողմնորոշում է այնքանով, որքանով գիտակցվում են թույլ տրված սխալները՝ հնարավորություն տալով հետագայում խուսափել դրանցից:


Ինֆլեքսիան գղջման գործիք է՝ գումարած ներքին ձայնի զգացումը, որը նշանակալից իրավիճակներում հուշում է ինչպես վարվել: Հենց դրա շնորհիվ էլ մարդը հայտնվում է ներքին ներդաշնակության մեջ. ինչը համահունչ է կրոնական վարդապետության ինքնակատարելագործման սկզբունքներին: Ինքնակատարելագործումն իր հերթին զուգորդվում է սեփական կեցությամբ բավարարվելու հետ: Բավարարվածությունը կարող է կապված լինել ինչպես կոնկրետ դիպվածի, հաջողության, այնպես էլ կյանքի առավել տևական ժամանակահատվածի հետ, որը դրական ֆոն է ստեղծում և առաջացնում հաճելի ու երանելի զգացումներ: Եթե բավարարվածության այդ երկու տեսակների միջև խզում չի առաջանում պահանջմունքների առումով, ապա կյանքը ներդաշնակ է ընթանում: Մինչդեռ հակասությունների դեպքում դիտվում է ներքին լարվածություն:

Ասվածի բնորոշ օրինակ է հետևյալը.

X-ը, որի և՛ հայրը, և՛ ավագ եղբայրը դատվածություն ունեին, ծնողների դրդմամբ ամուսնացել էր 16 տարեկան հասակում II խմբի հաշմանդամ, կակազող մի երիտասարդի հետ: Իր հավաստմամբ՝ նա ամբողջ կյանքում տառապել է այդ քայլի համար և իրեն համարել դժբախտ: Ամաչել է նույնիսկ ամուսնու հետ երևալ հասարակության մեջ՝ միաժամանակ դժգոհ լինելով նաև նրա ծնողների՝ իր հանդեպ դրսևորված վերաբերմունքից: X-ը երգելու, պարելու հակումներ է ունեցել և իրեն դժբախտ է համարել, որ չի կարողացել զարգացնել դրանք: Ամուսնուց ունեցած մեկ տղան և երկու դուստրերը նույնպես շնորհալի էին: Եվ քանի որ իրեն չէր հաջողվել ինքնադրսևորվել, ձգտում էր, որ զոհն աղջիկները զարգացնեին իրենց շնորհքը: Իսկ զավակներից ավագի՝ որդու հետ վերջին տարիներին առևտրով էր զբաղվում Ռուսաստանում: Ամուսնուց տնտեսապես այլևս կախված չէր, նրան արդեն ավելորդ էր համարում և ամեն կերպ ձգտում էր ազատվել վերջինից: Նորքի զանգվածում ունեցած 4 սենյականոց բնակարանը նրանց հատկացվել էր՝ հաշվի առնելով ամուսնու հաշմանդամությունը, մինչդեռ ինքը, բաժանության հարց բարձրացնելով, զոհն մեկ սենյակ չէր ուզում տրամադրել ամուսնուն: Ի վերջո նա կացնի հարվածով սպանում է ամուսնուն և տարբեր միջոցների դիմում՝ հետքերը թաքցնելու համար: Բայց հանցագործությունը բացահայտվում է, նշանակվում է համալիր դատահոգեբանա-հոգեբուժական փորձաքննություն, որի ընթացքում տեղի ունեցած փորձագիտական զրույցի ժամանակ պարզվում է, որ կրտսեր աղջկան բացատրել է, թե ինչու է սպանել նրա հորը. «Ես դա արեցի, որ արևը փայլի քեզ վրա», արդարանալով, որ ինքը բարի գործ է կատարել, այլ ոչ թե չար ու դաժան: Ամուսնուց բաժանվելու ցանկության բավարարումը, ամուսին, որին նա համարում էր իր բոլոր դժբախտությունների ու անհաջողությունների պատճառը, X-ը իրականացրել էր ի վնաս ապրումակցման պահանջմունքի և չէր զգացել խղճի խայթ. որը, ի դեպ, գղջման տարատեսակներից է: Ավելին, համարելով, որ իր և ամուսնու թշնամական հարաբերություններում մեղքի մեծ բաժին ունեն նրա ծնողները, փորձաքննության ժամանակ բազմիցս կրկնել է, թե նրանք են կացինը տվել իր ձեռքը՝ ավելացնելով, որ ամուսնուն ինքը չի սպանել, սպանել է կացինը: Ի դեպ, երբ X-ին առաջարկվեց իր ցանկությամբ նկարել որևէ բան, նա հենց կացին նկարեց (նկար 1):

Հարկ է նշել, որ հոգեբույժ-փորձագետների կողմից X-ը մեղաւնակ է ճանաչվել:

Վերլուծելով X-ի՝ վերը նկարագրված վարքագիծը՝ պարզ է դառնում, որ նա չգիտակցված ձևով խուսափում էր այն պատժից, որ նախատեսված էր իր արարքի համար: Նա օբյեկտիվացնում էր իր բացասական գործողությունները՝ դրանցից ազատագրվելու նպատակով: Մեղքը այլ անձանց (ամուսին, ամուսնու ծնողներ) վրա բարդելով՝ X-ը ի վերջո գտնում է դրա կրողին՝ կացինը, և այդ միջոցով հոգեբանորեն ազատագրվում մեղքից:



նկար 1

Փորձաքննությունից հետո մենք հնարավորություն ենք ունեցել դիտելու X-ի վարքը նաև կալանավայրում: Նա իրեն մեղավորի նման չէր պահում, խիստ գործնական էր երեխաների հետ տեսակցությունների ժամանակ, ուղղություն էր տալիս նրանց յուրաքանչյուր քայլին և հավաստիացնում, որ ամեն ինչ լավ է ընթացնում: Ի դեպ, ինչպես վերևում նշեցինք, թեև ինքը տղայի հետ վերջին տարիներին Ռուսաստանում (Կրասնոդարում) առևտրով էր զբաղվել, հարաբերությունները նրանց միջև անհաշտ են եղել, լարված և նույնիսկ հասել են ագրեսիվ դրսևորումների: Միևնչեռ կալանավայրում գտնվելու ժամանակ արդեն լավ հարաբերություններ էին հաստատվել նրանց միջև: Մայրը որդու հանդեպ դարձել էր այնքան հոգատար ու ջերմ, որ նույնիսկ դա ընդգծում էր տղան: Նույնպիսի փոփոխություններ նկատվում էին կալանավորների հետ դրսևորած հարաբերություններում: Բացասական հույզերը իրենց տեղը զիջել էին դրականին: Նա կոնֆլիկտների տեղիք չէր տալիս և զգալիորեն բարեհամբույր էր դարձել: Կալանավայրում զրույցի ժամանակ նա այն միտքն էր արտահայտում, որ մեղք գործելու համար չի այնտեղ գտնվում, դա ժամանակավոր երևույթ է, և ինքն առիթն օգտագործում է իր հետագա պլանները ճշգրտելու և ընտանեկան կյանքը իմաստալից դարձնելու համար:


Դիտելով կալանավայրում X-ի դրսևորած վարքագիծը և մի պահ մոռացության տալով նրա կատարած սպանությունը՝ թերևս տեսականորեն հնարավոր է հանգել այն եզրակացության, որ յուրաքանչյուր մարդ իր էությանը բարի է, գթասիրտ ուրիշների նկատմամբ: Սակայն կոնկրետ փաստը խոսում է այն մասին, որ X-ը չի գիտակցել իր սխալը, երբ ցանկալի ձևով ապրելու իր պահանջմունքի բավարարումը իրագործել է ի վնաս բարության՝ դաժանորեն կյանքից զրկելով ամուսնուն:

Նման պարագայում անհնար է լիովին թմրեցնել խիղճը: Այստեղ հարկ է հիշել ինչպես զղջման՝ վերը հիշատակված երկրորդ իմաստը, այնպես էլ զղջման աստիճաններն ընդհանրապես: Եվ այդ ժամանակ պարզ կդառնա, որ X-ը նման հանգամանքներում հազիվ թե կարողանար պահպանել իր հոգեկան բավարարվածությունը: Դա հնարավոր կլիներ միայն խղճի լիակատար բացակայության դեպքում: Միևնչեռ քանի որ հանցագործությունը կատարելուց հետո X-ը, համոզված լինելով, որ ի վերջո կացինն է մեղավոր, ներքուստ մաքրվում էր, լիքքաթափվում, ապրում կատարսիս և դրանով իսկ խուսափում նյարդային կոնֆլիկտից, այսինքն՝ առկա էր պարզունակ, չգիտակցված զղջումը:

Հիմք ընդունելով Դ.Գրեեֆի մեթոդիկան՝ մենք X-ին առաջադրել ենք երեք շրջանակ՝ բացատրելով, որ դրանցից առաջինը ներկայացնում է իրեն, երկրորդը՝ ամուսնուն, երրորդը՝ կացինը: Յուրաքանչյուր շրջանակից առաջարկվել է իջեցնել գիծ: Թե այդ երեքից ով է ավելի շատ մեղավոր սպանության մեջ՝ համապատասխան օղակից իջեցվում է ամենաերկար գիծը, ով մեղավոր չէ՝ ամենակարճ գիծը, իսկ միջին աստիճանի մեղավորինը՝ միջին երկարության գիծը: Արդյունք-

Աերը հետևյալն են. ամենաերկար գիծը X-ը իջեցրել է այն օղակից, որը Աերկայացնում է կացինը. միջին երկարության գիծը՝ ամուսնուն Աերկայացնող օղակից, իսկ այն օղակից, որը հենց իրեն է Աերկայացնում. Աա ոչ մի գիծ չի իջեցրել, թեկուզև ըստ հրահանգի պարտավոր էր դա անել (Ակար 2):

Ինչպես ցույց է տալիս ստացված արդյունքների վերլուծությունը, X-ի մեջ կատարսիսի միջոցով տեղի է ունեցել ձերբազատում ճնշող, վնաս պատճառող հույզերից: Կատարսիսը ոչ թե պասիվ. այլ ակտիվ գործընթաց է, ունի իր էներգետիկ լիցքը և պայմանավորված է անձի համար Աշանակալի խնդիրների լուծմամբ:



Ակար 2

Անհատը սեփական մեղքը ըմբռնում է որպես մի բան, որ գոյություն ունի իրենից դուրս, քանի որ սեփական մեղքի ընկալումը կապված է Արա գիտակցության մեջ աշխարհի՝ իր կողմից ստեղծված պատկերի հետ: X-ը իր հանցավոր գործունեությամբ կառուցում է այն աշխարհի պատկերը, որում ինքը ապրում, գործում է և կուզենար դա վերափոխել ու ինչ-որ չափով Աորը ստեղծել: Նա օբյեկտիվ իրականությունից քաղում է այն, ինչը կօգնի կառուցելու աշխարհի իր ցանկալի պատկերը. և այստեղ ամենակարևորն այն է, թե ինչ կստացվի Աման գործընթացի արդյունքում: Էական չէ Աակ. թե ինչ միջոցների օգնությամբ կանցնի այդ գործընթացը: Սեփական մեղքի ըմբռնումը իր մեջ Աերառում է իր «ես»-ի ընկալումը, բացի այդ, Աակ այն գործիքը, որով իրականացվել է հանցագործությունը: Այսինքն՝ առարկան և կենդանի, զգացող օրգանիզմը ըմբռնվում են փոխկապվածության մեջ՝ օբյեկտ-սուբյեկտ կամ հակառակը: X-ը իր ողջ զգայական աշխարհով իրեն ըմբռնում է որպես օբյեկտիվ իրականության մաս, ինչպես մի առարկա՝ այլ առարկաների մեջ: Տեղի է ունենում միաձուլում, որը ընթանում է մի քանի փուլերով: Առաջին փուլում «ես»-ը և առարկան ըմբռնվում են միմյանցից անջատ, երկրորդում «ես»-ը և առարկան (հանցագործության գործիքը) արդեն մերձենում են, իսկ երրորդում առարկան (հանցագործության գործիքը) կլանում է «ես»-ին և հանդես գալիս որպես մեղքի կրող, այսինքն՝ արդեն այս փուլում մեղքը ընկնում է միայն առարկայի վրա:

Այսպիսով, մեղքի կամ «ես»-ի հատկանիշների հանգույցը փոխանցվում է առարկային (հանցագործության գործիքին), որն իր հերթին մշտապես առկա է գտնվում աշխարհի այն պատկերի մեջ, որը ունի անհատը՝ կոնկրետ դեպքում X-ը:


Փաստորեն այստեղ ևս իրականանում է ռեֆլեքսիա, սակայն կատարսիսը օգնում է ազատագրվել հոգեբանական այնպիսի կապանքներից, ինչպիսիք են հանցագործության կատարման հետևանքները: «Նեքին ձայնը» համահունչ է մաքրման զգացողությանը, քանի որ հիմնական խոչընդոտը՝ ամուսինը, վերացել է, թեկուզև բռնի սպանության ճանապարհով, որ իրականացվել է կացնի միջոցով: Ստացվում է, որ հանցավոր արարքը իր մեջ Աերառում է արտահայտված հուզական լարվածություն և միաժամանակ դրա միջոցով ազատագրում ու մաքրագործում:

Հայտնի է, որ առեղծվածային կատարսիս (մաքրում) տերմինը դեռևս Արիստոտելն է օգտագործել՝ ողբերգությունն ըմբռնելով որպես արվեստ, որը վայսի ու խղճահարության միջոցով օգնում է մաքրվելու Աշված ապրումներից: Հունարեն

catharsis – նշանակում է մաքրում հանցագործությունից, մեղքից²: Հայտնի է նաև, որ ողբերգության՝ դրամայի ծագումը կապված է հնագույն ծիսական արարողությունների հետ: Օրինակ՝ Հին Հունաստանում ցլին սպանելը դիտվում էր հանցագործություն (Элиан - “Пестрые рассказы”): Սակայն Աթենքում ամեն տարի ցլասպանության տոնական արարողություններ էին կատարվում: Ցլին մոտեցնում էին Ջևսի զոհասեղանին, և հատուկ ջրկիր աղջիկները ջուր էին բերում, որ քուրմը դրա մեջ սրի իր կացինը: Մեկ ուրիշ քուրմ կացինը փոխանցում էր ցլասպանին, որը հարվածում էր ցլին ու մի կողմ փախչում: Երրորդ քուրմը արդեն դանակով ցլին սպանում վերջացնում էր: Ներկաները հյուրասիրվում էին թարմ մսից պատրաստված ճաշատեսակներով: Այնուհետև սկսվում էր արարողության գլխավոր փուլը՝ մասնակիցների դատավարությունը: Ջրկիր աղջիկները մեղադրում էին կացինը սրող քուրմին, նա էլ այն քրմին, որը կացինը վերցրել է իր ձեռքից և առաջինը հարվածել ցլին: Վերջինս էլ իր հերթին մեղադրում էր երրորդ քրմին, որը դանակով վերջ էր տվել ցլի կյանքին: Նա էլ հայտարարում էր, որ ցլի իրական սպանողը դանակն է: Դանակը հարցաքննվում էր և, քանի որ անկարող էր ինքնասարդարացնող խոսք ասել, մեղավոր էր ճանաչվում և դատապարտվում մահապատժի: Հանդիսավոր թափորը ուղղվում էր դեպի բարձր ժայռի գագաթը և այնտեղից դանակը նետում ծովը:

Բերված օրինակում մաքրման դրամատիկացված արարողությունը զարգանալով ի վերջո վերածվում էր տարիմաստ դատի: Նման դատի տարրեր հաճախ դրսևորվում էին նաև այլ ժողովուրդների մաքրման տոնահանդեսներում: Մեզ մոտ մասնավորապես բարեկենդանի օրերին քաղաքով մեկ պատգարակի վրա տանում էին, այսպես կոչված, փաշային, որը անձնավորում էր գարնան աստծուն: Կենտրոնական հրապարակում, որտեղ երգում ու պարում էին ծպտյալ, դիմակավորված անձինք, դրվում էր գահ, որի վրա նստելով՝ փաշան դատում էր նրան, ում մեղավոր էր համարում: Հետո իրադրությունը կտրուկ փոխվում էր, և դատը տարվում էր արդեն փաշայի նկատմամբ. նրան ու շքախմբի անդամներին մերկացնում էին և խառազանում: Ի վերջո դահիճը հրաժարվում էր պարզաբանումներից և, բռնելով առաջին իսկ պատահած շանը, նրան հայտարարում էր գլխավոր մեղադրյալ և կախաղան բարձրացնում (նկար 3):

Այսպիսով, նման արարողությունները ներառում էին մաքրման ծեսեր: Ախտը, գարշությունը փոխանցվում էր մի օբյեկտից մյուսին, ըստ որում նշված արարողություններում որպես մաքրման նախերգանք տեղի էր ունենում ճնշված հոգեբանական իմպուլսների ազատագրում, մարդկային ինչ-որ թաքնված ներուժի իրացում: Այդ ծեսերը օգնում էին մաքրվելու հանցագործության հետևանքներից և խուսափելու պատժից: Հենց դա էր պատճառը, որ մաքրման դատը միշտ տարիմաստ էր լինում, իսկ արդյունքը՝ սխալ:



Նկար 3

² Տե՛ս Ն. Մ. Баш, А. В. Боброва и др., Современный словарь иностранных слов, М., 2001:

³ Տե՛ս Վ. Բդոյան, Հայ ժողովրդական խաղեր, Եր., 1963:

Եթե փորձենք փորք-ինչ ավելի խորամուխ լինել նման դատի թեմայի զարգացման բանահյուսական օրինակների մեջ, ապա կնկատենք, որ ինչ-որ ձևով կամ մեղքը հանվում էր մեղավորից՝ այն տեղափոխելով առարկաների վրա, կամ էլ մեղքը կրող էր հայտարարվում մեկ առանձին մեղք՝ դառնալով քաղաքացու անխառն:

Անցնելով մեր ժամանակներին, կարող ենք ասել, որ հանցագործություն (մասնավորապես, սպանություն) կատարող անձինք, մեկնաբանելով իրենց արարքը, երբեմն մեղքը գցում են կամ գործիքի վրա, որով կատարվել է ոճրագործությունը, կամ էլ սեփական մեղքի համար մեղադրում են մեկ ուրիշի՝ վերջինիս նույնպես դարձնելով քաղաքացու անխառն: Բայց դա չի նշանակում, թե նրանք իրենց լիովին անմեղ են համարում: Իր գործողություններին հանցագործը գնահատական տալիս է, բայց նրա ըմբռնմամբ միայն ինքը չէ ամբողջ մեղքը կրողը: Ծիշտ այնպես, ինչպես Սոֆոկլեսի մի ողբերգությունում, որտեղ Հերակլեսի մահվան մեջ մեղավոր են համարվում ողբերգության բոլոր մասնակիցները, այդ թվում և ինքը՝ Հերակլեսը: Մեղքի և մեղադրանքի փոխանցումը մի անձից մյուսին այնքան բնորոշ էր անտիկ գրականությանը, որ ի վերջո մեղավոր ճանաչվեց նույնիսկ Ջևր: «Ագամեմոն»-ում Էսքիլեսը նրա համար նույնիսկ հատուկ մակդիր է գործածում՝ «ամենամեղավոր»:

Կալանքից ազատ արձակվելուց հետո հավատացյալներ դարձած նախկին դատապարտյալների՝ մեր ուսումնասիրությունից պարզվում է, որ նրանք իրենց հանցավոր արարքների կատարումը մեկնաբանելիս մաքրման գործընթացը նախ և առաջ կապում են Աստծո անվան հետ՝ համենայն դեպս ընդունելով իրենց մեղքը, զղջալով դրա համար, ապաշխարելով: Հանցագործությունից մաքրվելը և արդարանալը նրանց համար հավասարազոր չեն հանցագործության միջոցով մաքրվելուն, ինչի մասին խոսվեց վերևում: Նրանց ըմբռնմամբ մաքրումը կատարվում է աստծո կամքով ու օժանդակությամբ, զուգահեռաբար նաև անձնային ապաշխարումով: Հոգեբանական նման կատարսիսի պայմաններում անձը ազատագրվում է և իր մեջ բացահայտում մինչ այդ անհայտ բոլորովին այլ էություն: Այստեղ կարելի է զուգահեռներ անցկացնել ասվածի և անտիկ ողբերգությունների միջև: Մասնավորապես Եվրիպիդեսի «Իֆիգենյան Ալվիդում» ստեղծագործության մեջ առկա են հոգեբանական կատարսիսի այնպիսի օրինակներ, երբ գործողության ընթացքում ազատագրվում ու բացահայտվում է մարդու ինչ-որ այլ, ներքին թաքնված էություն, և նա սկսում է անսպասելի արարքներ կատարել: Ի դեպ, նույնիսկ մեծն Արիստոտելը սխալ է բացատրել Եվրիպիդեսի ողբերգության հոգեբանականացման իմաստը: Նա Եվրիպիդեսին մեղադրում էր Իֆիգենյայի բնավորության բնութագրման հարցում անհետևողականություն դրսևորելու մեջ: Ըստ նրա, անհամարձակ, երկչոտ Իֆիգենյան միանգամից դառնում է հերոսուհի: Բայց Եվրիպիդեսը հենց հոգեբանական այդ անսպասելի թոփչքի միջոցով էլ փաստում է անձի ինքնաբացահայտումը և դրանով իսկ ի հայտ բերում անձի թաքնված ու խափանված միտումները, հոգևոր ազատագրումն ու կերպարանափոխումը:

Մեր փորձագիտական պրակտիկայում X-ի օրինակը եզակի չէ: Մաքրման տարրեր նկատվել են նաև այլ փորձաքննվողների մոտ, երբ մեղադրյալը սեփական մեղքը փոխանցել է ուրիշ օբյեկտի, մասնավորապես այն գործիքին, որով կատարվել է հանցագործությունը (դանակ, պտուտակահան, լար, քար, կացին և այլն): Փաստորեն սկզբից անտեսվում է սպանությունն արգելելու օրենքը, այսինքն՝ խախտվում է թաբուն, որին հաջորդում են կատարված հետևանքներից մաքրումը և մեղքից խուսափումը:

Այստեղ չենք կարող անտեսել հանցագործի ինքնագիտակցությանն աղընչփող հարցերը: Մանավանդ որ յուրաքանչյուր մարդ իր անձին վերաբերող կոն-

ցեպցիան կառուցում է սոցիալական փոխազդեցության միջոցով, իսկ ինքնագիտակցությունը զգալի չափով գոյանում է զուգորդումներից: Չհաշված վաղ մանկական շրջանը՝ ինքնագիտակցությունը երբեք այլոց կողմից տրված գնահատականների զուտ պասիվ ընկալում չէ: Այդ իսկ պատճառով անձը ձգտում է իր մասին ստեղծել բարենպաստ տպավորություն և սեփական ինքնագիտակցությանը տալ ճոխացված նկարագիր: Այս առումով ոչ ոք բացառություն չէ:

Վերջին հաշվով, բոլոր հոգեկան հատկությունները, որոնցով օժտված է անհատը, կենտրոնական տեղ են գրավում «ես» հասկացության մեջ: Հենց այդ «ես» հասկացությունից էլ յուրաքանչյուր անհատի մեջ ստեղծում է սեփական անձի առավել կամ նվազ չափով պարզ պատկեր, ինչն էլ հավանաբար դրա ամենաարժեքավոր մասն է: Եթե «ես»-ի այդ պատկերը արժանի բարձրության վրա է գտնվում, ապա մարդու օրգանիզմը գործում է նորմալ: Իսկ եթե հարձակումների է ենթարկվում, ստորացվում և այլն, ապա հնարավոր են տհաճ հետևանքներ մտավոր և ֆիզիկական բարեհաջողության գործում:

Այսպիսով, ներքին հոգեկան այն հատկությունների պահպանումն ու վեհացումը, որոնք առավել կամ նվազ չափով կենտրոնանում են անձի պատկերի շուրջ, սոցիալական աշխարհում դառնում են ամենազխալոր օբյեկտիվ ուժը:

Սակայն անձի պատկերը կամ ինքնագիտակցությունը կարող են ճնշվել անհանգստություն պատճառող աղբյուրի առկայությամբ, որը չվերացվելու դեպքում այն սկսում է զարգանալ տագնապի և անհարմարավետության զգացումներով: X-ի դեպքում այդպիսի ճնշման աղբյուր է ամուսինը, որը ֆիզիկական և մտավոր արատների պատճառով ստվերում էր կնոջ գունազարդված ինքնագիտակցությունը: Եվ քանի որ X-ի, ինչպես և, ի դեպ, բոլոր մարդկանց համար ինքնագիտակցությունը մնում է առաջնահերթ հոգս, որը նրանց ուղեկցում է ողջ կյանքում, ուստի նա ևս միշտ ջանքեր է գործադրել իր ինքնագիտակցությունը պատշաճ մակարդակի վրա պահելու համար:

Այդ առումով X-ը իրեն համարել է դժբախտ և ինքադրամատիզացվել, առավել ևս, որ նրան հատուկ էր ինքնաթատերայնացումը: Ինչպես արդեն նշել ենք, լինելով հաշմանդամի (դեբիլությամբ և լոգոնկրոզով տառապող) կին, X-ը ստորացված էր համարում իր ինքնասիրությունը: Իդեալի և «ես» կերպարի պահպանման համար նա այնպիսի ծայրահեղ միջոցի է դիմել, ինչպիսին է ամուսնու սպանությունը: Վերացնելով նրան ու մեղքը բարդելով կացնի վրա՝ նա իր համոզմամբ վերականգնել է սեփական արժանապատվության զգացումը և ձեռք բերել որոշակի անհատական կերպար, որի առկայությամբ մրցապայքարում նա իրեն ետին պլանում չէր զգա, գուցե և կարծանաճար գովեստների: X-ը, լինելով այն կարծիքին, թե իր ոռմանտիկ ձգտումները կործանվել են, չի բավարարվել բարեկեցության առկա պայմաններով, այլ իր ճոխացված ինքնագիտակցությամբ ձրգտել է առավելին: Չնայած գոյություն ունեցող օրենքներին ու վարքի նորմերին՝ անօրինական քայլին դիմելը նրա համար դժվարություն չի ներկայացրել այն առումով, որ նա հետզհետե ավելի ու ավելի է զզվել ամուսնուց և գործել է համաձայն իրադրության իր սեփական գնահատականի: Հուզական վիճակները, որ պաշարել են X-ին, հետևյալներն են՝ վիշտ՝ կապված անհաջող ամուսնության և հույսերի կործանման հետ, ցասում՝ ամուսնու և նրա ծնողների հանդեպ, որոնք իր դժբախտության պատճառն են եղել և նողկանքի տեղիք են տվել ամուսնու նկատմամբ: Այսինքն՝ X-ի մեջ առկա էր (ըստ Ք. Իզարդի)՝ բարդ հուզական համալիր երրորդություն՝ վիշտ, ցասում, նողկանք:

Ինչպես հայտնի է, անձնական պատասխանատվությունը արդյունք է հենց այն բանի, որ անձն ունի ընտրության հնարավորություն: Սպանելով ամուսնուն՝

՝ Տե՛ս К. Изард, Эмоции человека, М., 1980:

X-ը, փաստորեն, պահպանել է իր «ես» պատկերը, ուղեացված ինքնագիտակցությունը: Իսկ մեղքը հետագայում չընդունելով՝ փաստորեն իր սեփական գործողությունը ընկալել և մեկնաբանել է որպես մեկ ուրիշի կողմից կատարված: Այդ իմաստով, ինչպես նշել է Ֆրոյդը, սեփական մեղքը զգալը ինքնապատժումի տարատեսակ է: X-ը, գտնելով, որ սպանության համար մեղավոր է կացինը, ըստ էության իրեն ազատել է ոչ միայն օրենքով նախատեսված պատժից, այլև ինքնապատժումից:

Э. А. ГРИН - К проблемам вины, раскаяния и катарсиса. - Предполагается новое понимание субъекта противоправной деятельности, рассматриваются вопросы, связанные с понятием вины и раскаяния. На примере одного преступления анализируется процесс катарсиса, проводятся параллели с обычаями армянского и других народов, определяются условия, в которых возникают Я-образы, формируется самосознание.